ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման III նստաշրջանի արդյունքների մասին
(02.02.04թ. - 09.06.04թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման երրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 9 եռօրյա նիստ, իսկ հերթական եռօրյա նիստերից մեկը (ապրիլի 12-14-ը) տեղի չունեցավ քվորումի բացակայության պատճառով: Նստաշրջանից հետո՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ հունիսի 11-ին գումարվել է նաև 1 արտահերթ նստաշրջան:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էին 66 հարց, որը հետագայում լրացվեց ևս 53-ով: Նստաշրջանի օրակարգի 119 հարցերից 71-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններ էին, 34-ը՝ Ազգային ժողովի պատգամավորներինը, 3-ը՝ ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների համատեղ նախագծեր, իսկ 11-ը ՀՀ օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող հարցեր:

ՀՀ կառավարության 71 օրենքների նախագծերից 13-ը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին:

Նստաշրջանի ընթացքում 108 օրենքների նախագծերից քննարկվել են 78-ը, որոնցից 11-ը ընդունվել են երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (9-ը կառավարության, 1-ը՝ պատգամավորների, իսկ 1-ը ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների համատեղ նախագիծ), 37-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (31-ը կառավարության, 6-ը՝ ԱԺ պատգամավորների), 3-ը՝ երկրորդ ընթերցմամբ (1-ը՝ ՀՀ կառավարության; 1-ը՝ ԱԺ-ի պատգամավորների, իսկ 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագիծ) և 13-ը՝ առաջին ընթերցմամբ (10-ը կառավարության, 2-ը՝ ԱԺ պատգամավորների, իսկ 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագիծ), 12 նախագծի ընդունումը հերթական ընթերցմամբ մերժվել է Ազգային ժողովի կողմից (9-ը ՀՀ կառավարության, 3-ը ԱԺ պատգամավորների), ՀՀ կառավարության նախաձեռնած 2 նախագծերի փաթեթ I ընթերցմամբ ընդունվելուց հետո հետ է կանչվել՝ հետագա լրամշակման նպատակով: Հետ է կանչվել նաև նստաշրջանի օրակարգում ընդգրկված սակայն նստաշրջանի ընթացքում չքննարկված ՀՀ կառավարության 2 նախագիծ՝ քննարկման նպատակահար-մարությունը վերանալու նպատակով:

Մերժվել են ՀՀ կառավարության ներկայացրած հետևյալ նախագծերը՝ *

1. «Բարձրագույն և հոտբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

---

* 1-5 նախագծերը հետագայում լրամշակվեցին և դարձյալ ներկայացվեցին ՀՀ ԱԺ-ի քննարկմանը, իսկ առաջին 2 նախագծերի ընդունումը հերթական ընթերցմամբ ԱԺ-ը մերժել է 2 անգամ:

2. «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը,
3. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը,
4. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը
5. «Ապահովագրության մասին», «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը
6. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
7. «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ ԱԺ պատգամավորների ներկայացրած նախագծերից մերժվել են՝

- «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ԱԺ պատգամավորներ Ա. Արսենյան և Հ. Նաղդալյան),
- «Ծխախոտի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (ԱԺ պատգամավորներ Հ. Հակոբյան, Ռ. Հովսեփյան, Գ. Սահակյան և ուրիշներ),
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին»» ՀՀ օրենքի նախագիծը (ԱԺ պատգամավորներ Ա. Առաքելյան և Հ. Բիշարյան, Ս. Բալասանյան, Գ. Սահակյան և Լ. Մկրտչյան):

Ազգային ժողովը քվեարկությամբ եռօրյա նիստերի օրակարգ չընդգրկեց նաև ԱԺ պատգամավորների 3 օրենսդրական նախաձեռնություններ՝

1. «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
2. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը,

3. «Քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ ԱԺ որոշման նախագիծը:

Շրջանառությունից հանվեցին ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ներկայացված 4 օրենքների նախագծեր: Դրանք են՝

1. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (երկրորդ ընթերցում),

2. «Ձենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (երկրորդ ընթերցում),

3. ա) «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին»,

բ) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»,

գ) «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

դ) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (երկրորդ ընթերցում),

4. ա) «ՀՀ տրանսպորտային տեսչության մասին»,

բ) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (երկրորդ ընթերցում),

Ամբողջությամբ ընդունված 48 օրենքներից 40-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 7-ը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներինը, իսկ 1-ը՝ «Հոգեկան առողջության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ նախաձեռնությունն էր:

48 օրենքներից 11-ը մայր օրենքներ էին (9-ը՝ ՀՀ կառավարության, 1-ը՝ ԱԺ պատգամավորների, 1-ը՝ ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ ներկայացրած նախագիծ), իսկ 37-ը փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում (31-ը՝ ՀՀ կառավարության, 6-ը՝ ԱԺ-ի պատգամավորների):

Ամբողջությամբ ընդունված 48 օրենքներից 18-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 10-ը՝ սոցիալական, բնապահպանական և առողջապահական նշանակություն, 10-ը՝ իրավական դաշտից են, 2-ը վերաբերում են մշակութային ոլորտին, 3-ը՝ երկրի պաշտպանությանը և ազգային անվտանգությանը:

Ամբողջությամբ ընդունվեցին նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 7 օրենքների նախագծեր (5-ը ՀՀ կառավարության, 1-ը ԱԺ-ի պատգամավորների, 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ ներկայացրած նախագիծ):

Նախորդ նստաշրջանի ընթացքում I կամ II ընթերցմամբ ընդունվել և գարնանային նստաշրջան էին տեղափոխվել 19 նախագծեր, որոնցից 12-ը ԱԺ-ի III գումարման III նստաշրջանի ընթացքում այդպես էլ չքննարկվեցին՝ ամբողջությամբ ընդունելու համար:

Ազգային ժողովը՝

ա) քվեարկությամբ հաստատեց

- ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունը.

- ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի 2003 թվականի գործունեության տարեկան ծրագիրը,

բ) լսեց

- Կենտրոնական բանկի 2003 թվականի տարեկան հաշվետվությունը.

- Կենտրոնական բանկի 2004 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը.

- ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը 2002թ. գործունեության վերաբերյալ.

- «Հայխնայբանկ»-ում ավանդադրված ՀՀ քաղաքացիների խնայողական ավանդները վերականգնելու և փոխհատուցելու հնարավորություններն ուսումնասիրող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի հաղորդումը.

- Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի երկու հաղորդումները.

- Եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման հարցերի ժամանակավոր հանձնաժողովի երկու հաղորդումները,

գ) որոշում ընդունեց

- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի կրծքանշանի, պատվո մեդալի և պատվոգրի մասին.

- ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ընդունված պատգամավորական նախագծերի մեջ առավել մեծ թիվ են կազմում ՀՀ Ազգային ժողովում կոալիցիան ներկայացնող պատգամավորների (Գ. Սահակյան, Լ. Մկրտչյան, Ս. Բալասանյան) հեղինակած նախագծերը:

Ընդունված նախագծերից առանձնապես կարևոր են «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Քաղաքացիական պաշտպանության զորքերի մասին», «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի մասին», «Շարժական գույքի կադաստրի վարման, շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Համապատասխանության գնահատման մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Արխիվային գործի մասին», «Հոգեկան առողջության մասին», «Սպառողական նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքները:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 35 միջազգային պայմանագրեր, որոնցից 7-ը տնտեսության բնագավառում համագործակցության մասին է, 9-ը՝ իրավական բնագավառում համագործակցության, 13-ը՝ պաշտպանության, 6-ը գիտության, կրթության, առողջապահության և բնապահպանության բնագավառում:

Նստաշրջանի ընթացքում 24 պատգամավոր գրավոր հարցերով դիմել է ՀՀ կառավարությանը: 125 պատգամավոր հանդես է եկել հայտարարությամբ, որոնցից 52-ը վերաբերել են կառավարության գործունեությանը: